



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“ 03 ” ..... 04 ..... 2019թ.

**Հ Ր Ա Մ Ա Ն N° 67-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ  
ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 727-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2019 թվականի փետրվարի 25-ի N 8-Լ հրամանի հավելվածի 4-րդ և 6-րդ կետերի պահանջները՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Ներկայացված փաստաթղթերում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության գործունեության հիմնական ուղղություններին առնչվող 2 տարվա մասնագիտական փորձառության կամ նախարարության ոլորտին առնչվող ծրագրերի աշխատանքներին մասնակցության մասին փաստերի բացակայության հիմքով՝ մերժել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ՝

1) «Արմավիրի զարգացման կենտրոն» սոցիալ-տնտեսական հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Նաիրա Առաքելյանի դիմումը.

2) «Բնակարանային կոմունալ ոլորտի աշխատողների միավորում» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Ատոմ Սարգսյանի դիմումը.

3) «Հայ պետական ծառայողների միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Վաչե Քալաշյանի դիմումը.

4) «Զարթոնք» ժողովրդավարության զարգացում հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Լևոն Թումանյանի դիմումը.

5) «Համատիրությունների զարգացման ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Արամ Գրիգորյանի դիմումը.

6) «Երիտասարդ բժիշկների ազգային խորհուրդ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Նարեկ Վանեսյանի դիմումը.

7) Կարինե Սմբատյանի դիմումը:

03.04.2019

X 

VERIFIED OCSP 03.04.2019 14:43:38 GMT+4

Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս. Պապիկյան